

րուն, չարքաշ արժանիքներուն: Հսկայ գաղթականութիւնը, որ մեր ցեղն է մօտ հազար տարիէ ի վեր: Ու հրակայ անոր ճիգը քիչիկ-քիչիկ չէզոքացնելու իր օտարութիւնը իր բնականօրէն հողերէն, անոնց մէջ թափելով իր գիծերը: Անիկա կը հաւատարմեր յեղափոխութեան, կէս մը նկարագրէ, կէս մըն ալ դժբախտութեան ժանիքէն, որ ամէն հայու հոգին խածած է անպատճառ: Անիկա թերահաւատ էր անոր վարիչներէն...

Ամիս մը ամբողջ իրար հոտուրտացին անոնք: Գծի ջարդերուն մէկ հակահարուածն ալ այս պաշտամունքը: Այն ատեն անիկա աչքով էր տեսեր թրքութիւնը Պոլիս, կոտորածի ազատութեան մէջ, երբ հազիւ ապաստան գտաւ օտար հաստատութեան մը մէջ ու պատուհանէն դիտեց անմոռանալի պատկերը ջարդին, մանր ու հանգիստ տեսարան, երկու դերասանով, մէկը զոհ, միւսը՝ ջարդողը: Ով որ տեսած է այս բոլորները, անիկա չի կրնար ուրիշ կերպ սիրել իր ազգը:... Ամիս մը ամբողջ անիկա օրը հեղ մը կը թարմացնէր այդ անբուժելի միջառանջը՝ հասնելու համար կիսատ վայելքին, որ կեանքն էր հիմա, քիչ-չատ տանելի, սա փարթամ դաշտին ծոցը: Փակագիծ մը, միայն, որ կը ստուերէր այս իրականութիւնը. ատիկա՝ մենագարութիւնը առաջնորդին, որ գրականութեան մեծ մեղքովն էր արատաւոր ու սովորութիւն ունէր իր գրածները բռնի մտիկ ընել տալու իրեն: Է՛, «փոքր տանջանք էլ» ատիկա: Ականջները ամբողջ մարդը չեն հարկաւ: Կարելի էր լսել ու չհասկնալ: «Պրծա՛ւ, էլի»: Յետոյ, գրականութեան այդ զառիթափէն անիկա պիտի գտնէր սա երկրախոյզի զբաղումները: Վարդապետին ապագայ գրական աշխատութեանց վաւերական ատաղձ ու տուեալներ հայթայթելու համար -Ընկեր Մաթիկը չբաժնեց իմ տարակոյսը, որ գլխէն ճամբելու պատրուակով մը կ'ուզէր մեկնել այս ծրագիրը գրագէտ եկեղեցականին՝ մեր յեղափոխականը յանձն առաւ պատիւ ամբողջ Փոքր Ասիան, ճշգրիտ թիւերով վիճակագիրը պատրաստել ջարդերէն առաջ ու յետոյ՝ մեր ժողովուրդին: Եւրո-